

## ՈՒՂԵՑ ՈՒՅՑ

Ուղեցույցը նախատեսված է ԿԳՆ գիտության պետական կոմիտեի կողմից հայտարարված գիտական և գիտատեխնիկական գործունեության պայմանագրային (թեմատիկ) ֆինանսավորման 2015 թ. մրցույթի հայտերն *առցանց (on-line)* եղանակով լրացնելուն աջակցելու համար: Այն հայտատուներին կօգնի ստանալ առավել հաճախ տրվող մի քանի հարցերի պատասխանները:

1. Հայտի վերնագիրը պետք է բաղկացած լինի առավելագույնը **15** բառից և շարադրվի **հայերեն, անգլերեն, ռուսերեն:**
2. Հուշող (բանալի) բառերը, որոնց քանակը **երեքից** պակաս չի կարող լինել, բնութագրում են հետազոտության առարկան և խնդիրները, պետք է մուտքագրվեն հայերեն, անգլերեն և ռուսերեն լեզուներով ու տարանջատվեն ; (կետ-ստորակետ) նշանով: Անհրաժեշտ է նկատի ունենալ, որ հուշող (բանալի) բառերը հիմք են հանդիսանալու փորձագետի առավել ճշգրիտ ընտրություն կատարելու համար:
3. Նախագծի **անոտացիան** պետք է արտացոլի նախագծի էությունը, գրված լինի պարզ, լակոնիկ լեզվով և մի քանի նախադասությամբ նկարագրի այն հիմնահարցը, որի լուծմանն ուղղված է նախագիծը: Անոտացիան պետք է պարունակի **100-1300** նիշ՝ ներառյալ միջակայքերը, և շարադրված լինի **հայերեն, անգլերեն, ռուսերեն:**
4. Նախագիծն անհրաժեշտ է շարադրել հստակ, մանրամասն նկարագրելով՝
  - հետազոտության նպատակները, արդիականությունն ու կարևորությունը,
  - հետազոտական ծրագիրը, դրա համապատասխանությունը նպատակներին, իրագործելիությունը, տվյալ և/կամ հարակից բնագավառների առաջընթացի վրա ունենալիք ազդեցությունը,
  - հետազոտության կիրառվելիք մեթոդները, իրականացման փուլերն ու դրանց համապատասխանությունը հետազոտության նպատակների ձեռքբերմանը, փուլերի իրագործման հաջողվածության գնահատման չափանիշները,
  - կատարողների մասնագիտական որակավորման և տեխնիկական ապահովվածության համապատասխանությունը հետազոտության նպատակների ձեռքբերմանը,

- խմբի՝ տվյալ ուղղությամբ ձեռքբերումները և դրանց տարանջատումը մյուսների կողմից իրականացված աշխատանքներից,
  - ակնկալվող արդյունքները և դրանց տնօրինումը,
  - Ֆինանսավորման ծավալի և ծախսերի նախահաշվի՝ ըստ հոդվածների հիմնավորվածությունն ու համապատասխանությունը հետազոտության նպատակների ձեռքբերմանը (հայտի ֆինանսական մասը լրացնելու մանրամասն **ՈՒՂԵՑՈՒՅՑԸ** բերված է **առցանց** համակարգում):
5. Նախագիծը շարադրելիս օգտագործված բոլոր հղումները, այդ թվում՝ մասնավոր հաղորդագրություններն ու չհրապարակված արդյունքները պետք է նշվեն «Օգտագործված գրականության ցանկ» բաժնում:
  6. Նախագիծը պետք է պարունակի տեղեկատվություն բոլոր այն հարցերի վերաբերյալ, որոնք ներառված են գնահատման թերթիկում:
  7. Նախագիծը ներկայացվում է **12** չափի «**Unicode**» տառատեսակով, **1** կամ **1,5** տողամեջ հեռավորությամբ, հայերեն և անգլերեն լեզուներով, յուրաքանչյուրը մինչև **12** էջ՝ ներառյալ գրաֆիկները, գծագրերը, լուսանկարները և օգտագործված գրականության ցանկը:
  8. Նախագծի կատարողների մասին տեղեկությունները լրացնելիս պետք է ուշադրություն դարձնել այն հանգամանքին, որ խմբի ղեկավարի հրապարակումները բերվում են **2010-2015** թթ. համար, իսկ կատարողներին՝ անկախ հրապարակման տարեթվից, առավելագույնը **5** հրապարակումներ: Անհրաժեշտ է նկատի ունենալ, որ փորձաքննության ժամանակ նախապատվությունը տրվելու է նախագծի հետ անմիջական առնչություն ունեցող հրապարակումներին: Հրապարակումները կարող են մուտքագրվել **բնագրի** լեզվով:
  9. Ղեկավարի տվյալները լրացվում կամ խմբագրվում են «**Անհատական տվյալներ**» բաժնում, համակարգը դրանք ներառում է հայտի մեջ, եթե վերջիններս բավարարում են հայտի պահանջները:
  10. Կատարողը նույնպես պետք է նախապես գրանցված լինի առցանց համակարգում և լրացրած լինի իր էջի «**Անհատական տվյալներ**» և ստանա իր **անհատական կոդը**: Կատարողի տվյալները ղեկավարի կողմից տեղափոխվում են հայտ՝ օգտագործելով

կատարողի *անհատական կողմը*: Խորհրդատու ընդգրկելու դեպքում նրա մասին տվյալները լրացվում են *առցանց` «Տիտղոսաթերթ»* բաժնում:

11. Ղեկավարի և կատարողների, *բացի մեկ* երիտասարդ մասնագետից (*մինչև 35տ.*), մասնագիտական որակավորման գնահատականը տրվելու է ըստ նրանց գիտական և գիտատեխնիկական գործունեությունը նկարագրող գիտաչափական տվյալների:
12. Խմբի *մեկ* երիտասարդ անդամի (*մինչև 35տ.*), ասպիրանտի կամ ուսանողի մասնագիտական որակավորման գնահատականը տրվում է ըստ նրա գիտական և գիտատեխնիկական գործունեությունը նկարագրող գիտաչափական տվյալների կամ նախագծի հետազոտական ուղղության հետ մասնագիտական համապատասխանության: Գիտական հրապարակումների բացակայության դեպքում առավել խրախուսելի է համապատասխան մասնագիտության մագիստրանտների, քան բակալավրերի մասնակցությունը: